ԼՐԱՏՈՒ

ՀՍՍՀ ԳԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Նոյեմբերի 14-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ ընդհանուր ժողովը, որի աշխատանքին մասնակցում էին ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Կ. Ս. Դեմիրճյանը, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆ. Տ. Մարգայանը, ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Կ. Լ. Դալլաֆյանը: Ժողովի օրակարգն էր «Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի խնդիրները՝ ՍՄԿԿ Կենտկոմում 1985 թ. հունիսի 11-ին կայացած գիտատեխնիկական առաջադիմության արագացման հարցերին նվիրված խորհրդակցությունում ընկեր Մ. Ս. Գորբաչովի զեկուցման լույսի ներքո»:

Զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը: Նա ասաց, որ կուսակցության կողմից մշակված երկրի սոցիալ-տնտեսական զարգացման էական արագացման կուրսի հետևողական իրականացումը նոր խնդիրներ է դնում նաև ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի առջև: Այդ խնդիրների նպատակն է լրիվ օգտագործել հանրապետությունում կուտակված գիտական պոտենցիալը և էապես բարձրացնել գիտական ուսումնասիրությունների արդյունավետությունը: Հարկ է անել ամեն ինչ, որպեսզի գիտական նվաճումները կարճ ժամկետում և, որ գլխավորն է, արդյունավետորեն ներդրվեն հասարակական պրակտիկայի բոլոր ոլորտները, արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ, ինչպես նաև մյուս բնագավառներում: Կուսակցության սոցիալ-տնտեսական ստրատեգիայի իրականացումը պահանջում է հաստատել պատշաճ կարգապահություն, շեշտակիորեն բարձրացնել աշխատանքային, պետական ու տեխնոլոգիական կարգապահությունը: Պատշաճ կարգուկանոնի հաստատումը պետք է դառնա ՀՍՍՀ ԳԱ դիտական բոլոր հիմնարկների ու դրանց կոլեկտիվների հոգածության առարկան: Զեկուցողն այնուհետև կանգ առավ գիտության արդյունավետության բարձրացման և պրակտիկայի հետ նրա կապի կատարելագործման հարցերի վրա: Նա նշեց, որ կարևորը գիտական աշխատանքների ուղղությունների ճիշտ ընտրությունն է: Հիմնարար գիտության մեջ ավելի հաշող գիտական արդյունքներ ձեռք են բերվում այն ժամանակ, երբ ստեղծվում են գիտական նոր ուղղություններ: Գիտական կոլեկտիվներին ներկայացվող մյուս պահանջը, շարունակեց Վ. Հ. Համբարձումյանը, կյանքին, ժողովրդա-տնտեսական խնդիրներին ժամանակին և օպերատիվ ձևով արձագանքելն է: Այդ իմաստով վերջին տարիներին ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայում դրական որոշ տեղաշարժեր են կատարվել: Դա վերաբերում է հատկապես ֆիզիկամաթեմատիկական բաժանմունքի ինստիտուտներին:

Խոսելով ֆիզիկական և քիմիական ինստիտուտների աշխատանքների և գրանցում ձեռնարկված նոր միջոցառումների մասին, ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտը նշեց, որ գործը շատ կշահեր, եթե բացի այն կապերից, որոնք արդեն հաստատվել են այդ ինստիտուտների և արտադրական կազմակերպությունների միջև, հանրապետությունում ստեղծվեին նաև միջգերատեսչական գիտաարտադրական միավորումներ:

Կենսաբանական գիտությունների բաժանմունքի գործունեությունը վերլուծելիս զեկուցողը մասնավորապես խոսեց ֆիզիոլոգիայի ինստիտուտում նոր մեթոդների կիրառման ուղղությամբ կատարվող արդյունավետ աշխատանքի մասին, որն ուղղված է նեյրոնների գործունեության և փոխազդեցությունների պարզաբանմանը: Գյուղատնտեսության համար որոշ մշակումներ է կատարել միկրոկենսաբանության ինստիտուտը: Սակայն հարկ է նշել, որ ինստիտուտի գիտական պոտենցիալը թույլ է տալիս պահանջել ավելի կոնկրետ արդյունքներ: Փորձարարական կենսաբանության, միկրոկենսաբանության, հիդրոպոնիկայի, ինչպես և նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտները պետք է ավելի մեծ վստահությամբ ստանձնեն առաջատարի դերը՝ կենսատեխնոլոգիայի հետագա զարգացման խնդրում:

Նոր խնդիրները, նկատեց Վ. Համբարձումյանը, որոնք գրվում են ամբողջ հասարակության առջև, չեն կարող հաջողությամբ լուծվել առանց հասարակական գիտություններով զբաղվող գիտական կոլեկտիվների ակտիվ մասնակցության: Նրանք պետք է ուժեղացնեն զարգացած սոցիալիզմի կատարելագործման պրոբլեմների հետազոտությունը, բարձրացնեն գիտական հետազոտությունների գաղափարատեսական մակարդակն ու գործնական նշանակությունը, ավելի խոր ուսումնասիրեն դիալեկտիկական և պատմական

մատերիալիզմի, գիտական կոմունիզմի, քաղաքատնտեսության հրատապ պրոբլեմները, կուսակցության ղեկավար դերի բարձրացման հարցերը, միջազգային կոմունիստական, բանվորական և ազգային-ազատագրական շարժման փորձը։

Զեկուցման մեջ մեծ տեղ հատկացվեց գիտական կադրերի դաստիարակման և պատրաստման, գերատեսչական գիտահետազոտական ինստիտուտների, բուհերի հետ կապը ամրապնդելու, արտադրության հետ սերտորեն համագործակցելու, գիտական մշակումների կոորդինացումն ակադեմիայի գլխավորությամբ իրականացնելու հարցերին։

Ժողովում ելույթ ունեցան ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Գ. Մ. Ղարիբյանը, Ս. Գ. Մացոյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Ս. Հ. Մովսիսյանը, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Ռ. Մ. Մարտիրոսյանը և ՍՍՀՄ մանկավարժական գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Լ. Հ. Վալեսյանը։ Նրանք խոսեցին այն խնդիրների մասին, որոնք դրված են ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի առջև գիտատեխնիկական առաջադիմության արագացման բնագավառում։